

COUTAN: REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS
(SOUS LE PATRONAGE DE M. E. DUCLAUX)

ԳՈՒԹԱՆ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Հ Ա Ն Դ Է Ս

F. ՏԱՐԻ

ԹԻԻ 10

1902

ՓԱՐԻՋ



Արի՛, ցարժան, զա՛րկ գուժան,
դրն եկե՛ք է նաչ գուռե՛լ,
Սաչ շուռ ասւր, բոճիտ զաւրած
Յրհնեալ է Աստուած հորով՛ի:

Բարձր էդո՛, սուրտ մարտոչ,
բաշե՛ր, բաշե՛ք - զար անե՛ք
Ճգախն արո՛: Ըշի՛ր հօտաղ,
Թեր սեւ օրին ճար անե՛ք:

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր - Տ Ն Յ Ր Է Ն

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Secrétaire: PAUL GÉRÉE

Directeur: K. MÉZADOURIAN,

Rédaction: 23, Rue de la Collégiale, PARIS (5^e)


Վ. ՎԵՐՄՕՐԷԼ

Վիլլֆրանշ (Րոն) քաղաք

1900ի Ցուցահանդեսին Երկու մեծ մրցանակ

ԷՔԼԷՐ ԹԻԼ 1 ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼ

ՄԵՍ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՇՈՂ



ՊԱՐԶՈՒԹԻՒՆ, ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ

Մ Ղ Ե Ղ Ա Կ Ն Ե Ր

Ուղեցէք տեղեկութիւն

Կարկուտի դէմ ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼՆԵՐ

ԷՔԼԷՐի վայրկենական Պուլյին Միլտիուի եւ Պլաքրոզի դէմ:

Երաշխաւորութիւն ազդեցութեան, դիւրաւ գործածուելուն եւ խնայողութեան. 12 լծվարի համար մէկ ծրարը 1 Փր. 75 : 24 ծրարը 42 Փր.

Գրել

V. VERMOREL

Villefranche (Rhône)

France

ՄԵՐ ՎԱՆՔԵՐԸ

Կ'ըսեն թէ՛ եղեր է ժամանակ մը, որ մեր բնագաւառի անթիւ վանքերը՝ լոյսի, գիտութեան վայրեր եւ մարգարեական կամ բարեգործական հաստատութիւններ եղած են:

Աշխարհքէ եւ կեանքի հաճոյքներէ ձեռք քաշողներ կամ աստուածային կայծը իրենց մէջ զգացողներ, մէկ մէկ գերազոյն նպատակներով, առանձնադէպ են այս խաղաղ եւ անզոր մենարաններու լուսութեանը մէջ, որոնցմէ ոմանք հեղինակելով, ոմանք թարգմանելով եւ ոմանք ալ ընդօրինակելով՝ հիմներ, կազմեր եւ ճոխացուցեր են մեր մայրենի գրականութիւնը:

Եղեր է ժամանակ մը՝ որ ունեցեր ենք հիւանդանոց եւ սրահնոց վանքեր ալ:

Տնտեսական ինքիւրներու մէջ ալ մեր վանքերը՝ անցեալին մէջ՝ նշանակելի ծառայութիւններ մատուցած են՝ երաշտութեանց եւ անյաջող հունձքերու ժամանակ՝ զիրենք շրջապատող գիւղացի հասարակութեան եւ երկրագործ դասակարգին:

Առատութեան տարիներուն վանքերու շտեմարանները կը լեցնէին վանքապահան կալուածներու բերքովը՝ ժողովուրդի առեւտրովը պաղիններովը, իսկ սովերու եւ նահանջներու ատեն կը բանային վանքի ամբարները կարօտ ժողովուրդին՝ աւելնալով անոր օւտեստացու եւ սերմնացու. այսպիսի պարագաներու մէջ վանքը տեսակ մը փոխատուութիւն կ'ընէր ժողովրդին՝ ունենալով իր բրաշխաւորութիւն, անոր գէպի վանքական հաստատութիւնը տաճած սէրն ու ոյժով հաւատարմ: Այսպէս ուրեմն՝ նոյն իսկ հետուոր անցեալին մէջ՝ մեր վանքերը հողագործական պանքաներու տարրական դերը կատարած են՝ սո՛ւ տարբերութեամբ, որ վերջիններս փոխ կուտան միայն գիւղացիին, ոչ թէ քարոյսական, այլ նիւթական արտադրութեան այսինքն՝ անոր հոգին կամ անշարժ կալուածքին վրայ:

Մեր առնձային իրական հարստութեան այդ հոյակապ

հաստատութիւնները ահաւասիկ այսօր ինչ ողբալի վիճակի մէջ կը գտնուին :

Կը քաղենք Խարբերդի առաջնորդական փոխանորդ Տէր Խաչատուր քահանայի Պատրիարքարան զրկած տեղեկագրէն :

«Դատեմի վանքի եկեղեցին 5-6 տարիներէ ի վեր մարտի վերածուած եւ յարդով լեցուած է, որուն պատճառը վանքի վարիչներն են :

«Զարդարիչի վանքն ալ նոյնպէս լիարժէք վիճակ մը ունի . . . :

«Սորսորի վանքը, որուն կալուածները ամենէն աւելի արդիւնաբեր են, տարեկան գրեթէ 80-100 ոսկիի արժէքով, աւերակ դարձած եւ անբողոքովին այնպէս որ մարդ կը շուարի թէ այստեղ արդեօք վանք մ'եղած է» :

Մեր հարիւրաւոր վանքերը՝ Խարբերդի աւերակ վանքերէն՝ գոհացուցիչ եւ բարուք վիճակի մը մէջ չեն եւ չեն կրնար ալ ըլլալ, քանի որ բոլորն ալ միեւնոյն վարչական ձեւին ենթարկուած եւ նոյնանման ինքնագլուխ եւ անպատասխանատու վարիչներով կը կառավարուին :

Չէ՛, ալէկ վիճակի մէջ չեն կրնար ըլլալ, քանի որ միայն հազուադէպ բացառութեամբ՝ մեր բոլոր վանքերու մէջ սքեմաւոր ծուլութիւնը՝ վեղարաւոր գողութեան հետ՝ անգործութեան մէջ գրկախառնուած՝ գիշերցերեկ կը խռկան :

Հայ վանքը՝ տեղ մը ընտանիքի մը սեպհակահանութիւնն է, ուրիշ տեղ մը հրաշագործ եպիսկոպոսի մը խանը, տեղ մ'ալ ընկոյզ կոտորող կամ սալախ շիտղ վարդապետի մը կալուածը, ուրիշ տեղ մ'ալ շահախնդիր եւ դժուր անտեսակալի մը դող վէճիլխարճին խանութը. այսպէս՝ չի կայ օրէնք, ո՛չ հաշիւ ո՛չ հաշուետուութիւն :

Վանքական հողերը երեսի վրայ կը ձգուին, որովհետեւ անոնց մէջ ապրող մի քանի մակաբուծերը՝ դիւրութեամբ եւ առանց աշխատութեան դեռ կրնան աղբիլ բարեպաշտ ժողովրդի պողիներովը եւ ջերմեռանգ ուխտաւորի դարպասներովը :

Ժողովուրդը կը պաղի վանքէն, կը դադրեցնէ իր սուրբերը, որովհետեւ ան իր վիճակովը չի զբաղուիր, իր տեսիլն տեսնելու չի ըլլար, անոր դող վէճիլխարճը իրեն հաւասար չի ներշնչեր՝ ո՛չ ալ անոր փիլաֆճի վանահայրը պատկառանք, երբ վանականը ապրելու դժուարութեանց

կը հանդիպի՝ փոխանակ իր ձեռքը դնելու արօրի մածին եւ ճակտին քրտինքովը փորին հացը ճարելու, կը թողու վանքը երեսի վրայ եւ փախչելով կը հեռանայ :

Վանքերու այս նիւթական եւ բարոյական անկու- մի պատասխանատուութիւնը մեր հոգեւոր եւ մարմ- նաւոր գերագոյն իշխանութեանց վրայ կ'իյնայ : Մեր այս նուիրական հաստատութիւնները, որ մեր նախնիք բարձր եւ մարդասիրական նպատակներով հիմներ եւ իրենց հանձարի արտագրութիւններովը եւ քրանաթոր աշխատութիւններովը սրբացուցեր են, եթէ այսպէս երեսի վրայ պիտի ձգուին եւ ժամանակի ընթացքին մէջ աւերն ու կործանումը պիտի լափեն ամեն բան եւ անոնց տեղը ապագային մէկ մէկ հսկայ գերեզմա- նական կոյտեր պիտի բարձրանան, հողար անգամ աւելի օգտակար պիտի ըլլայ, որ մ'առաջ քակել վանքական չէն- քերը՝ ծախել ատաղձը եւ դրամի վերածել, իսկ հողերն ալ յանձնել վանքերը շրջապատող գեղացի երկրագործ ժողովուրդին :

Այս անգամ միայն վէրքը մասնանիչ կ'ընենք :

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան Հայրերու վանքերը պահ մը թող մեզ օրինակ ըլլան : Աշխատու- թեամբ, կարգապահութեամբ եւ խելօք կառավարութեամբ Մխիթարեան Հայրերը կրցեր են ո՛չ միայն մտաւորական եւ բարոյական բարձր ու նախանձելի դիրքի մը մէջ գնել իրենց վանքերը, այլեւ նիւթական եւ տնտեսական :

Ոմանք գուցէ առարկեն թէ՛ միջավայրերն ալ նպաս- տած են իրենց, բայց միեւնոյն միջավայրի մէջ, եթէ անհոգ, ապիկար, ծոյլ եւ անպատասխանատու վարիչնե- րու յանձնուէին մեր ազգային հպարտութիւնն եզոզ այդ երկու պատուաբեր հաստատութիւնները՝ մէկ քանի տարի- ներու կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ ապահովարար՝ բնա- գաւառի աւերակ վանքերու աննախանձելի վիճակին մէջ պիտի իյնային :

Մխիթարեան վարիչներն ալ, չէ թէ եւրոպացի այլ, մեր հայրենի վանքերու վանահայրերու նման հայ մայ- րերէ ծնած են :

ՑՈՐԵՆԻ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵՂԱԻՆԸ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՍԵՐՄՆՑՈՒԻ

Ընտրուած սերմնացուի գործածութիւնը, այնքան մեծ նշանակութիւն ունի հունձքի արտադրութեան վրայ, որու մասին կանգ առնելն իսկ աւելորդ է:

Գծրազգաբար, մինչև իսկ եւրոպացի հողագործները, պէտք եղած խնամքովն ու զգուշութեամբը չեն կատարել այդ ընտրութիւնը, որով ամենալաւ հատիկներն անգամ կը տարասեռին՝ (dégénérer) այնպէս որ պէտք կ'ըլլայ մէկ քանի տարիէն վերջը փոխել:

Զատողներով կը ստացուի թէև մաքուր եւ գեղեցիկ հատիկներ, բայց այդ յատկութիւնները բաւական չեն, եթէ չի համաձայնին ազգագրական ընտրութեան հետ:

Ընտրութիւնը զօրեղ եւ արգիւնատու ըլլալու համար, պէտք է ըլլայ, խտածիշտ, մշտական եւ տարեկան:

Տէւրբէ հեռեւեալ կանոններով կը սահմանափակէ.

ա. — Իւրաքանչիւր տեսակի ցորեններէ ընտրել, հունձքի ատեն, սկզբնական տիպին վերաբերեալ հասկերէն միայն եւ բնաւ ուրիշներէ:

բ. — Ընտրել, նախապատուութեամբ, ամենագեղեցիկ հասկեր, որոնք աւելի կանոնաւոր կերպով բուսած են եւ կատարելապէս հասունցած:

գ. — Հասկ կապած ատեն նշանակել, առաջին եւ վերջին հասկերը, ուրիշք կտխում պիտի ունենայ սերմնացուի յառաջիկային կանուխ կամ ուշ հասնիլը:

դ. — Ընտրել ամենէն գեղեցիկ հատիկները, նախապատուութեամբ՝ առնելով հասկերու մէջտեղէն. դալով մեծութեան, ձեւին եւ գոյնին, նեաւ պակասաւոր, դէշ կազմուած, նիհար եւ խակ հատիկները:

Այս կանոնները սրբան ու պարզ են, բայց պէտք է կատարուին, խելօք, բարեխիղճ մարդոց ձեռքով եւ խիստ հսկողութեան ներքեւ:

Տը Պրիկտոն, որ շատ մը ցորենի տեսակներ ընտրու-

Թեամբ երեւան հանած է, արմտիքներու զարգացման հետեւեալ օրէնքները կը նշանակէ:

ա. — Խնամով եւ իր ժամանակին տնկուած հատիկ մը, կ'արտադրէ շատ մը հասկերէ բաղկացած բոյս մը, որոնցմէ մէկը ամենէն բարձր յատկութիւնները կը ներկայացնէ:

բ. — Բոյսի հասկերու մէջ փակուած հատիկներէն մէկ հատը միայն պէտք է ըլլայ ամենէն լաւագոյնը, այսինքն եթէ ցանուի պիտի արտադրէ լաւագոյն բոյսը:

գ. — Այդ լաւագոյն հատիկը կը գտնուի ամենէն ազէկ հասկի մէջտեղը:

Ընտրութեան այս եղանակը կրինտօնի մէջ փորձած է պ. Զօլա, ցանկելով առանձին առանձին հասկի մէջտեղէն եւ ծայրերէն առնուածները:

Մէջտեղի հատիկները մէկ հէկտար հողի վրայ տուած են 1900 քիլօ ցորեն, մինչդեռ հասկերու ծայրերէ ընտրուած սերմնցուն միեւնոյն տարածութեան վրայ տուած է 1440 քիլօ. այս տարբերութիւնը կը վերագրէ պ. Զօլա լաւագոյն հատիկներու ընձիւղի մեծութեան, որով բնականէ արագորիչու աւելի ոյժով կարողութիւն կ'ունենան:

Գտնուած են գիտուններ, որոնք ըսած են թէ՛ ընտրութիւնը կատարելու համար բաւական է մտնել արտի մը մէջ, կտրել առնել գեղեցկագոյն հասկերը եւ անոնցմէ ընտրել սերմնցուն: Հոս դիտել պէտք է որ, ատոնք կրնան բուսած ըլլալ լաւ հողի մը վրայ եւ լաւագոյն պայմաններու մէջ. քանի որ միջավայրի ազդեցութիւնը ժառանգական չէ, հետեւաբար այդ հատիկները տարբեր միջավայրի մը մէջ կրնան կորսնցնել այդ կարողութիւնը:

Որպէսզի փոփոխելիութիւնը հաստատուի, պէտք է ուշադրութեան առնուի ժառանգականութիւնը, պէտք է այս երկու ոյժերը գործեն միեւնոյն ուղղութեամբ, ատոր համար ալ ընտրութիւնը պէտք է ըլլայ անհատական:

Եթէ հատիկներու մեծութիւնը՝ նոյն իսկ բացարձակ պայման մը չէ լաւ ընտրութեան մը համար, այնուհանդերձ մեծապէս կը նպաստէ. ամենէն մեծ հատիկները կ'արտադրեն աւելի ուժեղ բոյսեր, որովհետեւ կրնան առատօրէն սնուցանել ծիւր (ընձիւղը), շնորհիւ իրենց պարունակած պաշարի տաատ քանակին: Ներկային մէջ չենք կրնար խորհուրդ տալ, հունձքի առնն, ընտրել գեղեցկագոյն հասկերը, սուղի կրնայ նստիլ գործողութիւնը, կարելի է

ընել միայն արդէն ծանօթ տեսակներու համար, որոնց առաւելութիւնները յայտնի են եւ հողին ու կլիմային վարժւած :

Ապագայ սերմնցուի յատկացուած ցորենին համար աւելի գիւրին է յատկացնել բարեբեր եւ ոյժով հող մը պէտք եղած ատեն ալ լաւ աղբել ու պարարել : Խնամքով ընտրուած սերմնցուն կանուխ պէտք է ցանել, աղէկ եղանակին եւ իրարմէ միջին հեռաւորութիւն ունեցող տողերով : Չմրան ցանքերը պէտք է ցաքանել եւ լողել պէտք եղած ատենը, քաղել բոլորովին հասունցած, ծեծելէ ետքը (կամին) խնամքով ընտրել ամենէն ծանր հատիկներէն սերմնցուն :

Հողագործը աւելի ապահով արդիւնք մը ձեռք բերելու համար, իր փորձը պէտք է կատարէ 4-ձ տեսակ ցորեններու վրայ, որպէսզի ընտրէ այն տեսակը, որ ենթակայ չէ պառկելու եւ կրնայ գիմագրել սնկային հիւանդութիւններու :

Հողագործը ամեն տարի այլ եւ այլ տեսակներ մշակելով, պիտի կրնայ առած արդիւնքները իրարու բաղադատելով, հասկնալ թէ իր հողին այսինչ կամ այն ինչ տեսակը աւելի արդիւնատու կ'ըլլայ. նախնական այս ընտրութիւնը կատարելէ վերջը պարտի իր սերմնցուն ընտրել աւելի մանրաքննին հոգածութեամբ, որովհետեւ տեսակներու մեթոտով եւ յարապեւ ընտրութեամբ միայն կարելի կ'ըլլայ հունձքի քանակը բարձրացնել : Ցորենի մշակութեան ապագայ յառաջգիմութիւնը կախում ունի միայն ընտրուած սերմնցուի ծագումէն, ճիշտ եղանակին քաշուէն, հողին ու կլիմային ընտելացումէն եւ վերջապէս տեսակէն :



ՇԵՐԱՄԻ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

III

Բեպրիկն կառ Քորբիւսիւն

Բառդէօսի քննութեանց արդիւնքը սա եղաւ . հաստատեց որ, ո՛ր եւ է հասակի շերամներուն մարմնոյն մէջ ֆորբիւսիւսներ չեն գտնուիր . դարձեալ՝ եթէ քորբիւսքիւլ չի պարունակող շերամկիթերէ ելած որդերը խնամքով սնուցուին՝ ո՛չ որդերը, ո՛չ հարսնուկները, ո՛չ թիթեաները եւ ո՛չ ալ անոնց ածած շերամկիթերը այլևս քորբիւսքիւլներ չեն պարունակեր :

Ասոր հակառակը ամենէն նուազ թիւով, նոյն իսկ մի քանի քորբիւսքիւլ պարունակող շերամկիթերէ ելած շերամները անթիւ ու անհամար քորբիւսքիւլներ կը պարունակեն . կը պատահի երբեմն, որ հիւանդները չեն մեռնիր, երբեմն ալ կը տեսնուի որ, բոլոր հիւսուածքները ջիղերն ու մկանուկները, մարսողութեան գործարանները, մետաքսատու գեղձերը միքրոպներով լեցուն են . հիւսուածքարանական տարրերը կ'աներեւութանան՝ եւ գործարաններու ձեւը միայն կը պահուի : Շերամը չի մեռնիր, բայց այլ եւս չ'աճիր, չի մեծնար, կը կծկուի, կը կոնձմոփ կը փոթնայ, կը խորշոմի եւ մեռնողներու ամբողջ մարմինը քորբիւսքիւլով լեցուած կ'ըլլայ :

Բոլոր միքրոպներու մէջ, ամենէն արագ եւ արտակարգ անոզը քորբիւսքիւլն է, որուն թիւը եթէ ոչ աւելի, գոնէ հաւասար կ'ըլլայ թիթեաններու գործարանները կազմող հիւսուածքարանական տարրերու թիւին :

Մեծանուն վարպետ, պ. Տիւքթ, հիւանդ շերամներէ մատղաշ քորբիւսքիւլներ առնելով վարակեր է թիթենիի տերիւներ եւ անոնցմով սնուցեր բոլորովին առողջ շերամներ : Երկրորդ փորձով մ'ալ, Բրավազի ներարկոցով (séringue de Pravaz), քորբիւսքիւլներ ներմուծած է առողջ շերամներու մարմնոյն մէջ :

Այս երկու փորձերով հաստատած է որ, քորբիւսքիւլի

սերմերը ներարկուած շերամի մարմնոյն մէջ կ'աճին, կը բաղմանան այն աստիճան՝ որ վերջապէս կը սպաննեն զայն:

Չեն մեռնիր բացառաբար միայն այն շերամները, որոնց օրկանիզմը ոյժով է եւ մահացնող միքրոպներու ազդեցութեան դիմադրելու կարող. քօրբիւսքիւլները եթէ մարտողական խողովակին մէջ գտնուին, անոր վարի մասերուն մէջ, պոչի կողմերը աւելի կը զարգանան:

Վարակումէն 8-10 օր վերջը պոչին վրայ նշանները երեւան կ'ելլեն, մինչդեռ մարմնոյն մասունքներուն մէջ դեռ ոչինչ կը նշմարուի. է՛ն ասաջ, շերամի մորթին վրայ կը նշմարուին շատ փոքրիկ եւ նուրբ բիծեր, որոնք երթալով կը մեծնան եւ վարակումէն 10-12 օր վերջը բոլորովին տեսանելի կ'ըլլան:

Քօրբիւսքիւլի ժահրը միայն հիւանդներուն մէջ չի գտնուիր, տարի մը առաջ այս հիւանդութեամբ վարակուած շերամատուներու փոշին կամ միեւնոյն տարիէն մնացած հիւանդ շերամներու ծիրտերուն մէջ ալ առատութեամբ կը գտնուի:

Առողջ եւ հիւանդ շերամները, եթէ իրարու մօտ, սեղմուած եւ խիտ ըլլան, անշուշտ հիւանդութեան պատճառներն ալ միշտ ներկայ կ'ըլլան. հիւանդ շերամներու ծիրտերը տերեւներուն վրայ կը թափին եւ որդերու անդադար շարժումներովը եւ շփումովը կը տարածուին տերեւներուն վրայ:

Առողջ շերամներու մէկ մասը շնորհիւ իրենց ոյժով եւ զօրեղ գործարաններուն, կը մարսեն վարակիչ միքրոպները. բայց երեւոյթը միշտ այսպէս սեղի չ'ունենար, շերամներու մէկ մասը խայթուածքներով կը վարակի. որդերու առջի թաթիկները զինուած ըլլալով կարծր ճանկերով իրարու մարմին անդիտակցաբար կը ծակծկեն եւ որովհետեւ ազտօտ նիւթերու վրայ կը քալեն եւ միքրոպներ կը փակչին իրենց թաթերուն՝ բնական է որ իրենց ճանկերով կը պատուաստեն առողջները:

Բեպոնի տարափոխիկ ըլլալը վերոյիշեալ պատճառաբանութիւնով կը հաստատուի:

Աշխարհի վրայ ինչպէս ամէն բան իր մխիթարական կողմը ունի, այս հիւանդութիւնն ալ իրը ունի:

Հիւանդութիւնը հսկայաքայլ չի յառաջանար, այլ գտնդազօրէն. որպէսզի շերամը ծանրօպէս հիւանդանայ եւ

իր բոժոժը հիւսելու անկարող ըլլայ, պէտք է որ վարակուած թուականէն 30 օրեր անցած ըլլան:

Միջին հաշուով շերամը 35 օր որդային վիճակ ունի, այսինքն շերամկիթէն դուրս ելլելէն 35 օր վերջը կը գործէ իր բոժոժը, ուրեմն եթէ շերամը շերամկիթէ գուրս ելած պահուն քօրքիւսքիւններ չի պարունակեր, անպատճառ պիտի կրնայ շինել իր բոժոժը, քանի որ հիւանդութիւնը 30 աւուր մէջ միայն կրնայ կոտորածներ գործել:

Որպէսզի հիւանդութիւնը կոտորածներ ընէ՝ պէտք է որ շերամը հիւանդութիւնը ստացած ըլլայ ծնած օրերուն մէջ. այս վայրկեանին արդէն հիւանդութիւնը ծանրապէս վարակուած շերամներու մէջ իսկ քնացած վիճակի մէջ է, այսինքն ժահրը կատաղի չէ. որդերու կենաց առջի օրերը այնպիսի վայրկեաններ են, որ ոչ ժահրը կը կլլին, ոչ ալ անով կը պատուաստուին, ուրեմն, եթէ ի սկզբան շերամկիթերը առողջ են, այսինքն քօրքիւսքիւններ չեն պարունակեր, հետեւաբար հիւանդութիւնը չի կրնար մեղցընել շերամները ու փճացնել շերամարուծի գեղեցիկ յոյսերը:

Շերամը իր բոժոժը հիւսած պահուն, որքան ալ քիչ հիւանդ եղած ըլլայ, անոր մէջ բանտարկուած ժամանակամիջոցին, այսինքն 15-20 օրի մէջ, հիւանդութիւնը կամաց կամաց առաջ կ'երթայ, կը զարգանայ, կը վարակէ որդի բոլոր հիւսուածքները, մասնաւորաբար անոնք, որոնց մէջ կը կազմուին շերամկիթերը, որով այս թիթեռներու ամած շերամկիթերը վարակուած կ'ըլլան եւ բոժոժ շինելու անկարող, հետեւաբար հիւանդ թիթեռներու ամած շերամկիթերը բնաւ գործածելու չէ շերամարուծութեան համար:

Հիւանդութիւն չ'ունեցող թիթեռներու ամած շերամկիթերը միայն առողջ են:

Բէպրինի հիւանդութիւնը փոխանցող է, որովհետեւ առողջ որդերը կը ստանան հիւանդութիւնը իրենց հիւանդ գրայցիներէն եւ ժառանգական է, որովհետեւ քօրքիւսքիւնով հիւանդ թիթեռի ամած շերամկիթերը իրենց մէջ կը պարունակեն միքրոօպներ:

Բասգէօն այս երկու հարցերը փոխանցողութիւնն ու ժառանգականութիւնը կը միացնէ՝ ցոյց աալով որ, շերամապահութեան առաջին օրերուն մէջ կենդանի քօրքիւսքիւններ կը գտնուին միայն շերամկիթին մէջ: Մնացած քօրքիւսքիւնները, այսինքն շերամաստուներու փոշինե-

րու մէջ անատորէն գտնուածները, նախորդ տարիներու հիւանդոտ շերամկիթերու վրայ եղածները կամ մի քանի շաբաթ, մի քանի ամիս հինցածները՝ արդէն մեռած եւ անելու, արտագրելու անկարող են, հետեւաբար կ'ըսէ՝ հիւանդութեան ամեն տարի իր տարափոխիկ ախտանիշերովը երեւելուն պատճառը ժառանգական քորրիւսքիւլներն են:

Կը յաւելու դարձեալ՝ պիտի դայ օր մը, որ աշխարհիս երեսէն հիւանդութիւնը յաւէտ պիտի ջնջուի, եթէ բոլոր շերամաբուծերը միմիայն առողջ շերամկիթերով շերամապահութիւն ընեն, քանի որ շերամկիթի միջոցաւ փոխանցուած քորրիւսքիւլները միայն կը պահեն մէկ տարիէն միւսը իրենց վարակող յատկութիւնները:

Հ Ա Ռ Ա Յ Ո Ւ Մ Ա Կ Ա Ն

ՀՈՂԱԳՈՐԾԻ ՀԱԻՐ

Արտադրութիւն. — Բերք. — Հաւկիթի առեւտուր

Հողագործը իր հաւերուն հաւկիթէն կարեւոր հասոյթ մը կրնայ ստանալ ամեն տարի, եթէ քիչ մը ուշադրութիւն դարձնէ այս արտադրութեան վրայ:

Հաւի ձուի սննդական արժէքը հին ժամանակներէ ի վեր ճանչցած են մարդիկ եւ այս սնունդի զօրացուցիչ յատկութեանցը պատճառով կը փնտռուի քաղաքացիներէ եւ ճարտարարուեստական կեդրոններէ:

Հաւկիթի ճերմկուցի եւ դեղնուցի բաղադրութիւնը իրարմէ բոլորովին կը տարբերին. ճերմկուցը կը պարունակէ

	86	o/o	Չուր,
	12	o/o	ճերմկուցային (albumine) եւ
	05	o/o	հանքային նիւթեր:
Իսկ դեղնուցը	51	o/o	Չուր
	15	o/o	ճերմկուցային եւ
	1.5	o/o	հանքային նիւթեր:

Հաւկիթը դեղնուցով եւ ճերմկուցով մէկտեղ, կը պարունակէ

բունակէ ուրեմն 75 օ/օ ջուր եւ 25 օ/օ մաս սննդարար նիւթեր՝

Երկու հաւկիթ՝ առանց կեղեւի, միջին հաշուով 100 կրամ ծանրութիւն հաշուելով, կրնայ հետեւցուիլ որ 20 հաւկիթը ճիշտ մէկ քիլօ մսի սննդարար արժէքը կը ներկայացնեն:

Հաւ մը, քանի մը օրուան մէջ իր ծանրութեանը չափ սննդարար նիւթեր կ'արտադրէ, եւ կը ներկայացնէ ուսելիք բերքերու ամենէն կատարեալ եւ տիպար գործարանը:

Մարդկութեան սնունդին մէջ հաւկիթի կատարած մեծ դերը կրնանք հաստատել. սպառումը երթալով կ'աւելնայ, օրինակ մը՝ 1899ին Բարիզ մտած է 538,299,120 հաւկիթ, միջին հաշուով իւրաքանչիւրը 50 կրամ կշռող, որ ըսել է կը ներկայացնէ 26,914,956 քիլօ սննդարար նիւթեր կամ 400 քիլօ կշռող, առանց ոսկորի, 168,000 եզի միս այսինքն միեւնոյն տարւոյն մէջ Բարիզի մէջ մորթուած կենդանիներու երկու երրորդը՝

Հաւկիթի այս արտադրութիւնը եթէ կանոնաւոր կերպով առաջնորդուի եւ կառավարուի, կրնայ շահու աղբիւր մը ըլլալ, հաւկիթը պատուական սնունդ մը ըլլալը տեսանք, զայն արտադրող հաւերը հողագործին համար թանկագին գործարաններ են հաւկիթի ու աղբի, ընդարձակօրէն պիտի զբաղինք անով մեր յառաջիկայ թիւերուն մէջ:

Ա Գ Ա Ր Ա Կ Ի Գ Ե Ղ Ա Ր Ա Ն Ր

ԿԱԿՂԻՉ ԴԵՂԵՐ

Սահման. — Յատկութիւններ. — Կործածութիւն

Կակղիչ գեղերու յատկութիւնն է թուլցնել, ընդլայնել եւ կակղեցնել մարմնի մը ուռեցած մասերը: Այս մարմինները կը պարունակեն տեսակ մը խէժ կամ խէժաջուր, որ դժուարին կերպով՝ մազականութեամբ՝ կ'անցնի մորթէն եւ մարմնոյն հիւսուածքներէն:

Երբ այս գեղերը կը գրուին ուռեցքի մը վրայ, որ

գոյացած է արեան համախուժումէն, ջրալի մասերը կ'անցնին իւտուածքներէն ներմղոնով (endosmose) երթալու համար կակղիչին այսինքն՝ գեղին մէջ:

Գլխաւոր կակղիչներն են.

1. Տորենի քեփը — որ կը արուի երկու օր թեփ անուշ ջուրի մէջ թրած, չարաչար յոգնած եւ անխտանգ հաղէ բռնուած եզներու:

2. Տուղի (կիւլհաթէմ) արուսը — մէկ լիդրա ջուրի մէջ եփել 20-25 կրամ տուղաի արմատ. պաղեցնելէ ետքը կը գործածուի մի քանի հիւանդութեանց գէմ, իրրեւ ըմպելիք, սոսորգաջուր (կարկառա), լուալու, գրեխի եւ այլն:

Իբր ըմպելիք արուած ասեն կարելի է հեաը խառնել

30-40 կրամ մեղր:

Մոլոչն (էպէմ քէօմէճի) ու կտաւատը կրնան տուղաի գործը տեսնել:

Որոճացող կենդանիներու համար եթէ պիտի տրուի տուղաի ջուրը, պէտք է երկու երեք լիդրա ջուր ալ աւելցնել:

3. Մոլոչի եւ րոքի (օխլամուր) ծաղիկները իբր ծխելիք (թիւթսիւ):

Ծխելիք կ'ըտուի գեղերու հետ խառն պատրաստուած շոգին, այս շոգին արտագրելու համար, բաւ է մոլոչի կամ թմբիի օր մը ծաղիկ գնել ջուրի մէջ եւ տաքցնել:

ծաղկով մոլոչ	100	կրամ
թմբիի ծաղիկ	50	»
ջուր	5	լիդրա

պատրաստելու համար, մոլոչը եփել ջուրին մէջ, ետ առնել կրակէն եւ աւելցնել թմբին:

Այս պատրաստուածին վրայ կը գնեն կործուած ձաղար մը (հունի) եւ շոգին կ'ուղղեն հիւանդ մասին վրայ:

Ամառը կենդանիէն քիչ մը հեռու գրուելու է, որ կենդանին շատ տաքութիւն չզգայ:

Պատուական միջոց մ'է սա', գլխու հարբուիք, ջղատապի (պրօնչիթ), փողացաւի եւ ծծի ուսեցքի գէմ:

Թմբիի ծաղիկ տեղ կրնայ գործածուիլ թանթրուենիի ծաղիկը եւ մոլոչենի փոխարէն գազաիկուրինը (bourrache):



Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Տորենի ոչիրը . — Անխնամ շտեմարաններու մէջ կ'երևի ընդհանրապէս այս միջատը, ցորենը շտեմարան փոխադրելէ առաջ հոգաատար գիւղացին պարտի իր ամբարը աւելի, մաքրել եւ հաւաքած փոշին այրել, որուն մէջ կը գտնուին միջատները եւ անոնց ձուիկները: Այս գործողութենէն ետքն ալ ճեղքուածքներու ծակերուն վրայ եռացած ջուր լեցնելու եւ ծեփելու է խայծղանով (կուսոն—խաքրան), շտեմարանի պատերը լուսւոյ է 5 առ 100 մաս քարիւղ (կազ) խառնուած կըաջրով . այս աշխատութիւնները կրնան կատարուիլ եթէ շտեմարանը պարապ է:

Ենթադրենք թէ ցորենը ոջլոտած է, ճարեցէք տակոներ, լցէք անոնց երեք քառորդ մասը ցորենով եւ իւրաքանչիւր 100 լիգր ցորենի վրայ ալ 10 լիգր սիւլֆիւր սք ֆաւպօն, տակոներու երեսը զոցեցէք ու լողի մը պէս գլորեցէք. մէկ երկու օր տակոնին մէջ թողէք դարմանուած ցորենը՝ պարպիլէ վերջը մնացածէն լեցուցէք եւ այգպէս յաջորդաբար. ցորենի ոջիւղները սիւլֆիւր աը քարպօնով կը մեռնին ու դուք մեծ վնասէ մը կ'ազատիք:

Ջրհորները ապակեխել . — Գիւղերու մէջ շատ անգամ ջրհորները կը գտնուին ախոռներու մօտերը եւ բակերու մէջ, այնպէս որ՝ անձրեւներէ ետքը, աղտոտ ջրերը հողէն ու պատերէն անցնելով կը վազեն հորին մէջ: Աղտոտ ջուրերը պատի ճեղքուածներուն մէջ մաս մը ապականուած նիւթեր կը ձգեն՝ որ կամաց կամաց կը լուծուի եւ ջուրը կ'ապականէ:

Տօք. Թրանքը, Պեռլինի Բազմարուեստական ընկերութեան մատնանիշ ըրած է հետեւեալ միջոցը՝ որ շատ յաջող արդիւնքներ առած է:

Ջրհորին բերանը կը կախեն հողէ աման մը, պնակ մը, որուն մէջ կը լեցնէ 50-100 կրամ պրօն (brome), որ ամենաուժով ապանեխող մ'է եւ կը ցնդի օդին մէջ: Կը կազմուի իսկոյն շոգիի ամպ մը, որ օդէն աւելի ծանր ըլլալով, կամաց կամաց կ'իջնէ, լիզելով հորի պատերը, մտնելով ճեղքերու մէջ եւ ոչնչացնելով ամբողջովին գործարանաւոր նիւթերը:

Այդ ամպը կ'իջնէ մինչեւ հորին խորը, կ'անցնի ջուրէն, թէեւ ատեն մը ջուրին կուտայ պրօնի անախորժ համը, լայց բոլորովին կը մաքրէ ու կը յստակէ:

Պրօմը այրող նիւթ մ'է, ուշագրութեամբ պէտք է գործածել: Գիւղարանները կը ծախուի եւ քիլօն կ'արժէ 7-8 ֆրանք:

Charrues à Vapeur
 Locomotives à Vapeur
 Camions à Vapeur
 Tomberaux Routières
 Rouleaux des Routes à vapeur

Շոգեշարժ արօրներ
 Պոդսսներու շոգեշարժներ
 Շոգեշարժ սայրակներ
 Շոգեշարժ ցած սայրակներ
 Պոդսսներու շոգեշարժ լողեր

De construction parfaite et d'une solidité à toute épreuve,
 sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler & Cie.
 MAGDEBOURG

(Allemagne)

Փորձուած ամուսնութեամբ եւ ընտիր շէնքով, կը
 զրկուին ամենաաժան գներով Գերմանիոյ Մակտէպուրկի
 ԺՕՆ ԻՅՎԼԷՐ Ընկերութեան կողմէն:

Ք Ա Յ Ո Ւ Ա Մ Է

“Գ Ո Ւ Թ Ա Ն,,Ի

Բրդ ՇՐՋԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժնեկիրն եւ թղթակցութիւն զրկել միեւնոյն հաս-
 ցելով:

Ծանօթ. — Մեր Եւրոպայի եւ Ամերիկայի բաժանորդ-
 ներու մեծամասնութիւն մը խորհուրդ կուտար մեզ փոսթի
 միջոցով գանձել մեր բաժնեկիրները. յարգելով մեր պատ.
 բաժանորդներու այդ բաղձանքը՝ այսուհետեւ փոսթի միջո-
 ցով պիտի գանձենք «Փուլթան»ի բաժնեկները:

ՆՈՐ ԳԵՂԱՐՈՒԵՍ

Կը պատրաստենք նոր մէթոտով պատկերներ զանազան
 մեծութիւններով, որոնք նրբութեամբ եւ նմանութեամբ
 կը գերազանցեն մինչեւ հիմա եղած մէթոտներով պատրաս-
 տուած նկարները:

Սեւանկար, դունաւոր եւ իւզաներկ պատկերներ կը
 պատրաստենք խնամով եւ շնորհիւ նոր արուեստին՝ բոլո-
 րովին մաաչելի գներով:

30×40 մեծութեամբ 12 ֆր. իսկ գունաւորը 15 ֆր.
 40×50 » 15 » » 20 »

Յանձնարարութեան կէտը կանխիկ:

Մանրամասնութիւնք թղթակցութիւնով. գիմեցէք
 հասցէիս A. Jévalier 26, rue des Ecole — Paris

«Փուլթան»ի բաժանորդներուն 100ին 20 գեղջով կը
 կատարուի յանձնարարութիւնները, բաւ է որ այս թուղթը
 զրկին պ. ձեռլահիրի իրենց յանձնարարութեան հետ:

Le Gérant: PAUL GÉRÉE

Imprimerie B. MISSAC — 4, Rue Ortolan. PARIS